ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ. (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200: **գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018Թ.
№ 31 (489)

www.syuniacyerkir.am

Տարինե՜ր, տարինե՜ր,
Ո՞ւր մնացին տարիներս,
Կանաչ-կարմիր,
Սեւ, սպիտակ տարիներս...

Համո Սահյան

Վախճանվել է մեր ժամանակների մեծագույն սյունեցիներից մեկը՝ Մաքսիմ Հակոբյանը

2018թ. դեկտեմբերի 9-ին՝ ժամը 20-ի սահմաններում, երկրային կյանքին հրաժեշտ տվեց Մաքսիմ Անուշավանի Հակոբյանը:

Նա անկախության շրջանի ամենանշանավոր ու արժանապատիվ սյունեցիներից էր:

Նա եղավ ու մինչեւ կյանքի վերջը մնաց ընդօրինակման արժանի անձնավորություն եւ ցույց տվեց, թե ինչպես պետք է նվիրվել երկրին ու հայրենի երկրամասին:

Ահա թե ինչու նրա մահվան գույժը ցնցեց մեր լեռնաշխարհի հազարավոր մարդկանց:

***

Մաքսիմ Անուշավանի Հակոբյանը ծնվել է 1949թ. օգոստոսի 8-ին Կապանի շրջանի Վերին Հանդ գյուղում:

Միջնակարգն ավարտելուց հետո սովորել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի լեռնային ֆակուլտետում եւ բարձր առաջադիմությամբ ավարտել այն:

1972 թվականից աշխատել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում, սկզբում՝ էքսկավատորավարի օգնական, ապա՝ լեռնային վարպետ, հերթափոխի պետ, տեղամասի պետ, արտադրամասի գլխավոր ինժեներ, կոմբինատի գլխավոր ինժեների տեղակալ, աշխատանքի անվտանգության տեխնիկայի եւ շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ, կոմբինատի գլխավոր ինժեներ:

1998թ. մայիսից գլխավորել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը:

Ձեռնարկության գլխավոր տնօրենի պաշտոնը վարել է մինչեւ 2014թ. հուլիսը:

2002թ. Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով պարգեւատրվել է Անանիա Շիրակացու մեդալով:

2002թ. Մայր աթոռ Սուրբ էջմիածինը նրան արժանացրել է Հայ առաքելական եկեղեցու բարձր պարգեւին՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանի:

Մեղրի, Քաջարան, Ագարակ, Կապան քաղաքների, Արմավիրի մարզի, Արարատի մարզի պատվավոր քաղաքացի էր:

էջ 7

Սյունիքը վստահեց Նիկոլ Փաշինյանին

Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերն ընդգրկող թիվ 12 ընտրատարածքում հաշվառված 161.767 ընտրողից քվեարկությանը մասնակցել է 90.412 հոգի:

Քվեարկությանը մասնակցած ընտրողներից 65.470 հոգի (72.60 տոկոս) վստահել է «Իմ քայլը» դաշինքին:

7102 ընտրող (7.88 տոկոս) քվեարկել է հօգուտ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության:

«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցությանը ձայն է տվել 4242 ընտրող (4.70 տոկոս):

«Լուսավոր Հայաստան» կուսակցության օգտին քվեարկել է 4186 հոգի (4.64 տոկոս):

Հայաստանի հանրապետական կուսակցությանը վստահել է 2907 հոգի կամ քվեարկության իրավունք ունեցողների 3.22 տոկոսը:

***

Դեկտեմբերի 9-ին կայացած ԱԺ արտահերթ ընտրությանը թիվ 12 ընտրատարածքում քվեարկելու իրավունք ունեցող 161.767 քաղաքացուց քվեարկությանը մասնակցել է 90.423-ը կամ 55.90 տոկոսը:

Գորիս համայնքում 23.261 ընտրողից քվեարկությանը մասնակցել է 13.105 ընտրող կամ 56.34 տոկոսը:

Կապան համայնքում 38.972 ընտրողից քվեարկությանը մասնակցել է 22.321 հոգի կամ 57.27 տոկոսը:

Սիսիան համայնքում 23.528 ընտրողից քվեարկությանը մասնակցել է 11.543 հոգի կամ 49.06 տոկոսը:

Իսկ հանրապետությունում՝ 2.593.120 ընտրողից քվեարկությանը մասնակցել է 1.262.160 հոգի կամ քվեարկելու իրավունք ունեցողների 48.63 տոկոսը:

«Սյունյաց երկիր»

ԱԺ 2018թ. դեկտեմբերի 9-ի ընտրության արդյունքները

Ըստ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի արձանագրության՝

- ընտրողների ընդհանուր թիվը՝ 2.593.120,
- քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը՝ 1.262.164,
- կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը՝

Հայաստանի Հանրապետական կուսակցություն՝ 59.068,

«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն՝ 8.533,

«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն՝ 48.822,

«Իմ քայլը» դաշինք՝ 884.849,

«Լուսավոր Հայաստան» կուսակցություն՝ 80.049,

«Քրիստոնեաժողովրդական վերածնունդ» կուսակցություն՝ 6.460,

«Ազգային առաջընթաց» կուսակցություն՝ 4.122,

«Մենք» դաշինք՝ 25.174,

«Օրինաց երկիր» կուսակցություն՝ 12.390,

«Սասնա ծռեր» համահայկական կուսակցություն՝ 22.868,

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն՝ 103.837:

Քվեարկության արդյունքները թիվ 12 ընտրատարածքում (կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը)

1. Հայաստանի Հանրապետական կուսակցություն՝ 2907 (3.22%)
2. «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցութուն՝ 632 (0.70%)
3. «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն՝ 4242 (4.70%)
4. «Իմ քայլը» դաշինք՝ 65470 (72.60%)
5. «Լուսավոր Հայաստան» կուսակցություն՝ 4186 (4.64%)
6. «Քրիստոնեաժողովրդական» կուսակցություն՝ 499 (0.55%)
7. «Ազգային առաջընթաց» կուսակցություն՝ 347 (0.38%)
8. «Մենք» դաշինք՝ 3276 (3.63%)
9. «Օրինաց երկիր» կուսակցություն՝ 467 (0.52%)
10. «Սասնա ծռեր» համահայկական կուսակցություն՝ 1052 (1.17%)
11. «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն՝ 7102 (7.88%)

Փակվում է պատմության այս փուլը եւ գալիս է նորը...

(անդրադարձ ԱԺ արտահերթ ընտրության արդյունքներին)

Դաշնակցություն. «Սա պարտություն է, սակայն ոչ մեր ընտրողների»

Արմեն Ռուստամյան

Վարուժան Ավետիսյան

«Արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքում ՀՅ Դաշնակցությունը ներկայացված չի լինի Հայաստանի Հանրապետության 7-րդ գումարման Ազգային ժողովում: Սա պարտություն է, սակայն ոչ մեր ընտրողների», - հայտարարում է ՀՅԴ-ն:

Իր հրապարակած հայտարարությունում Դաշնակցությունը նշում է, որ այդ պարտության մեջ տեսնում է հետեւյալը. **«Ընտրողն այսօր իր ձայնը տվեց անհատին, ոչ գաղափարին ու ծրագրին: Ընտրության մասնակիցների մի ստվար զանգվածն այսօր կենտրոնացած է «ներքին թշնամու» կերպարի վրա ու ապշելու աստիճան անհոգ է արտաքին եւ ներքին վտանգներին հանդիման: Դաշնակցության մոտեցումներն այսօր ընկալվում են փոքրամասնության կողմից: Պատշաճորեն չի կարեւորվում Արցախյան գործոնը քաղաքական օրակարգում: Չեւավորվում է Ազգային ժողով առանց հստակ գաղափարական եւ ազգային դիմագծի»:**

Կարճատեւ քարոզարշավը կուսակցությունը կարեւորում է նաեւ նրանով, որ՝ **«Ստացանք իրատեսական պատկերացում համակիրների այն բանակի մասին, որը կմասնակցի մեր պայքարին: Այդ բանակը փոքրաթիվ է, բայց փոխարենն իրական, նրա որոշումը հստակ է, ոչ մոդայիկ եւ թելադրված է միայն ու միայն ներքին համոզմամբ ու հստակ գիտակցությամբ: Ոչ մի անգիտակից քվե, ոչ մի պատահական մարդ: Կարողացանք բանավիճել, բարձրաձայնել մեր մտահոգությունները, հակադարձել վտանգավոր միտումներին, բերել մեր փաստարկները: Այս պահին մեր խոսքը լայն ընկալում չունեցավ ու թերագնահատվեց, սակայն մեզ հաջողվեց ցույց տալ իրավիճակն անտեսված կողմից, մտածելու ու վերլուծելու առիթ ստեղծել ու արթնացնել զգոնությունը: Ժամանակի ընթացքում անկողմնակալ, հայրենիքի ճակատագրով մտահոգ ու Արցախի հիմնախնդրի նշանակությունը ճիշտ պատկերացնող մեր քաղաքացիները կհամադրեն ամեն օր ստացվող նորությունները մեր հնչեցրած մտահոգությունների հետ եւ կգիտակցեն, թե ինչի մասին էինք խոսում, ահազանգում»:**

Շնորհակալություն հայտնելով ՀՅԴ-ին կողմ քվեարկած քաղաքացիներին, իր շարքերին եւ դաշնակցական երիտասարդներին, Դաշնակցությունն ամփոփում է. **«Փակվում է պատմության այս փուլը, ու գալիս է նորը: Մենք մուտք ենք գործում այդ նոր պատմության մեջ համազգային կուռ կառույցով, ապագայի մեր երազանքով ու պայքարելու վճռականությամբ»:**

«Սասնա Ծռեր» համահայկական կուսակցության քարտուղարության հայտարարությունը

ՀՀ Ազգային ժողովի 2018թ. դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրություններն էական առաջընթաց քայլ էին նախկին հանցավոր ռեժիմին հեռացնելուց հետո Հայաստանում ժողովրդավարության հաստատման եւ ազգային պետականության կայացման ճանապարհին:

Քվեարկությունը, չնայած դրա ընթացքում արձանագրված խախտումներին, ընդհանուր առմամբ եղել է ազատ ու թափանցիկ, ինչի շնորհիվ ժողովուրդն ազատորեն արտահայտել է իր կամքը:

Այդուհանդերձ՝ անհրաժեշտ է նշել, որ ընտրությունների արդյունքների վրա շոշափելի ազդեցություն ունեցան մի շարք գործոններ, որոնք պայմանավորված էին Ընտրական օրենսգիրքը եւ Կուսակցությունների մասին օրենքը չփոփոխելու հանգամանքով: Դրա հետեւանքով ընտրություններին մասնակցող ուժերի միջեւ առաջացավ անհավասար մրցակցություն եւ, օլիգարխիան, օգտվելով ընձեռնված հնարավորությունից, մասնակցեց ընտրություններին եւ մասամբ նորից սողոսկեց խորհրդարան:

Այդ պատճառով ստիպված ենք փաստել, որ ընտրությունները չեն կարող անվերապահ կերպով համարվել արդար:

Անկախ այս հանգամանքից, կարեւորելով ժողովրդի ազատ կամարտահայտության փաստը, «Սասնա Ծռեր» համահայկական կուսակցության քարտուղարությունը ճանաչում է ընտրությունների արդյունքները, շնորհավորում է «Իմ քայլը» դաշինքին՝ նրա տարած հաղթանակի առթիվ եւ ապագա կառավարությանը մաղթում է արգասաբեր աշխատանք:

Գագիկ Ծառուկյանի ուղերձը

Գագիկ Ծառուկյան

Սիրելի՛ հայրենակիցներ

Դեկտեմբերի 9-ի խորհրդարանի արտահերթ ընտրություններն ավարտվեցին, եւ հանրության քվեով ձեւավորվեց այն խորհրդարանը, որը մեր երկրում պետք է իրականացնի քաղաքական եւ տնտեսական այն բարեփոխումները, որոնք նախանշելու են մեր երկրի առաջիկա տարիների զարգացումը: Ես՝ որպես «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ, իմ անկեղծ շնորհակալությունն եմ հայտնում ընտրությանը մասնակցած եւ ԲՀԿ-ին վստահության քվե տված մեր բոլոր հայրենակիցներին: Վստահ եղե՛ք, որ ձեր յուրաքանչյուր քվեն իմ եւ իմ թիմի համար մեծագույն պատասխանատվություն է, եւ այդ պատասխանատվությունը մենք անվերապահորեն իրացնելու ենք: Որպես երկրորդ քաղաքական ուժ՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը լինելու է ձեր ձայնը խորհրդարանում եւ հավատարիմ մնալով իր գաղափարախոսությանը՝ շարունակելու է լինել ժողովրդի կողքին եւ իր գործունեությունը ծավալել բացառապես ի շահ եւ իր բարօրություն հայ ժողովրդի:

Ես շնորհավորում եմ նաեւ խորհրդարան անցած «Իմ քայլը» դաշինքին եւ «Լուսավոր Հայաստան» կուսակցությանը եւ բոլորիս մաղթում արդյունավետ ու արգասաբեր աշխատանք՝ ի բարգավաճում Հայաստանի եւ Արցախի հանրապետությունների եւ ի շահ մեր աշխարհասփյուռ հայրենակիցների: Աստված պահապա՛ն բոլորիս:

ՀՀԿ-ն հաջողություն է մաղթում խորհրդարան անցած ուժերին եւ հայտարարում ժողովրդի խնդիրների լուծմանը հանձնառու լինելու մասին

Վիգեն Սարգսյան

Հայաստանի Հանրապետական կուսակցությունը հայտարարություն է տարածել, որում հաջողություն է մաղթել Հայաստանում կայացած Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների արդյունքներով խորհրդարան անցած քաղաքական ուժերին եւ նրանց ձեւավորելիք կառավարությանը՝ շեշտելով, որ դրանից է կախված մեր երկրի եւ ժողովրդի անվտանգությունն ու զարգացման հեռանկարը:

«Մենք հաջողություն ենք մաղթում խորհրդարան անցած ուժերին եւ նրանց ձեւավորելիք կառավարությանը, քանի որ դրանից է կախված մեր երկրի եւ ժողովրդի անվտանգությունն ու զարգացման հեռանկարը: Ընտրապայքարի ընթացքում մեր հնչեցրած մտահոգությունները չէին կրում քարոզչական բնույթ, այլ արտահայտում էին մեր խորին անհամաձայնությունն արտաքին, անվտանգային եւ պաշտպանական քաղաքականության, սոցիալ-տնտեսական միտումների, ազգային արժեքների խաթարման եւ, ամենակարեւորը, Արցախի հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ հնչեցված մոտեցումների եւ առաջին տեսանելի քայլերի առումով: Մենք շարունակելու ենք մեր աշխատանքն այս ուղղություններով որպես արտախորհրդարանական ուժ»,- ասված է հայտարարության մեջ:

Միեւնույն ժամանակ, հայտարարության մեջ ասված է, ներքին քաղաքական այս թեժ մրցակցությունը չպետք է ոգեւորի Հայաստանի եւ Արցախի թշնամիներին: **«Անկախ միջկուսակցական պայքարում բոլոր տարաձայնություններից՝ Հանրապետականը հանձնառու է մնում մաս լինելու մեր ժողովրդի խնդիրների լուծմանը եւ շարունակելու է ամուր կանգնել մեր փառապանծ Զինված ուժերի կողքին»:**

«Լուսավոր Հայաստան»-ը քաղաքակրթական եւ արժեքային ընդդիմություն է ձեւավորված քաղաքական մեծամասնությանը

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունը հայտարարություն է տարածել Հայաստանում կայացած արտահերթ խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ: Հայտարարության մեջ մասնավորապես, ասված է.

«Հայաստանում կայացած պատմական ընտրությունները մեր երկրում հեղափոխության տրամաբանական շարունակությունն էին, դրա արժեքների կապիտալիզացիան ապահովող հիմնական գործընթացը: «Լուսավոր Հայաստան» կուսակցությունն արժեւորում է օրինական ընտրությունների կազմակերպման իրողությունը՝ իր երախտագիտությունը հայտնելով մեր կուսակցությանը վստահության քվե տված քաղաքացիներին: Մենք դա համարում ենք մեր եռամյա ակտիվ գործունեության հանրային գնահատականը, ապացույցը, որ Հայաստանի հասարակությունն ունի իրապես ազատական ու եվրոպական մոդելի պետություն կառուցելու անվերապահ պահանջ:

Միեւնույն ժամանակ դեկտեմբերի 9-ի ընտրություններով ավարտվում է հեղափոխությունը, ու երկիրը թեւակոխում է համակարգային, ինստիտուցիոնալ բարեփոխումների փուլ, որտեղ խորհրդարանն ունի հայեցակարգային մոտեցումներ ունեցող, փոխզսպող եւ հակակշիռ հանդիսացող ուժի անհրաժեշտություն:

Էդմոն Մարուքյան

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունը քաղաքակրթական եւ արժեքային ընդդիմություն է՝ ձեւավորված քաղաքական մեծամասնությանը: Միաժամանակ, մտահոգ ենք, որ անգամ հեղափոխությունից հետո խոշոր բիզնեսը եւ քաղաքականությունը շարունակում են մնալ քաղաքական խրոնիկ հիվանդ համակարգի հետեւանք, որի դեմ պայքարը լինելու է մեր ուժի գլխավոր առաջնահերթություններից մեկը:

Հավատարիմ ենք «Լուսավոր Հայաստան» կուսակցության կողմից որդեգրված արժեքներին եւ սկզբունքներին, որը միտված է համակարգային բարեփոխումների իրականացմանն ու այդ արժեքների շուրջ հասարակության լայն համախմբմանը: Որպես նոր Հայաստանի պատմական ընտրության արդյունքում խորհրդարանական միակ ընդդիմադիր ուժ՝ միշտ բաց ենք համագործակցության համար խորհրդարանից դուրս գործող արժեքավոր քաղաքական ուժերի եւ անհատների հետ»:

«Մենք» դաշինքի հայտարարությունը

Արամ Սարգսյան

Սիրելի՛ հայրենակիցներ,

Դեկտեմբերի 9-ին կայացած Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախնական արդյունքներն արդեն հրապարակված են, եւ կարող ենք ասել, որ վերջին 20 տարում Հայաստանում առաջին անգամ տեղի ունեցան ընտրություններ, որտեղ իրենց գործուն ազդեցությունը չեն ունեցել կրիմինալը, փողաբաժանությունն ու կեղծիքները:

Այս փաստի առթիվ շնորհավորում ենք բոլորիս եւ նաեւ խորհրդարան անցած ուժերին՝ հույս ունենալով, որ նրանք կկարողանան գործել ի շահ Հայաստանի և

ՀՀ քաղաքացու:

Այո՛, այս ընտրություններն անցել են առանց էական խախտումների եւ միջադեպերի, բայց նաեւ ակնհայտ է բոլորի համար, որ նախընտրական քարոզարշավի ընթացքում բովանդակային, գաղափարական եւ ծրագրային պայքար այդպես էլ տեղի չունեցավ, որի արդյունքում էլ ունեցանք միաբեւեռ Ազգային ժողով, ինչը երկրի զարգացման տեսանկյունից եւ խորհրդարանական կառավարման համակարգի կայացման առումով դրական երեւույթ չէ:

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում մեր ընտրողներին մեզ վստահելու համար: Վստահ եղե՛ք, որ Ձեր յուրաքանչյուրի քվեն մեզ պարտավորեցնում է ավելի մեծ թափով աշխատել եւ մեր գաղափարակիցների բանակն էլ ավելի մեծացնել՝ հանուն ինքնավստահ եւ ապագային պատրաստ Հայաստանի եւ հանուն ՀՀ քաղաքացու բարօրության:

ՕԵԿ-ը շնորհավորում է խորհրդարան անցած քաղաքական ուժերին

Արթուր Բաղդասարյան

«Օրինաց Երկիր» կուսակցությունը դեկտեմբերի 9-ին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրությունների կապակցությամբ, հանդես է եկել հայտարարությամբ:

ՕԵԿ հայտարարության մեջ ասվում է. **«Դեկտեմբերի 9-ին տեղի ունեցան Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ: Շնորհակալություն ենք հայտնում մեր օգտին քվեարկած ավելի քան 12 հազար քաղաքացիներին, մեր համախոհներին եւ գաղափարակից ընկերներին: Շնորհավորում ենք խորհրդարան անցած երեք քաղաքական ուժերին՝ մաղթելով նրանց արդյունավետ գործունեություն ի նպաստ Հայաստանի Հանրապետության եւ մեր ժողովրդի:**

«Օրինաց Երկիր» կուսակցությունը վերջին 20 տարիների ընթացքում հանդիսանում է ՀՀ առավել ակտիվ քաղաքական ուժերից մեկը: 18 տարի շարունակ ներկայացված լինելով ՀՀ Ազգային ժողովում ՕԵԿ-ը պայքարել է մեր երկրի անվտանգության, քաղաքացիների սոցիալական պաշտպանության եւ բարեկեցության, ինչպես նաեւ արդարության եւ օրինականության ամրապնդման համար:

250-ից ավելի օրենքները, բազմաթիվ ժողովրդանպաստ ծրագրերը եւ նախաձեռնությունները ասվածի վառ օրինակն են եւ նպաստել են հարյուր հազարավոր մեր քաղաքացիների խնդիրների լուծմանը: Աստված պահապան բոլորին»:

Նիկոլ Փաշինյան. «Սա աննախադեպ իրադարձություն է երրորդ հանրապետության պատմության մեջ, եւ համարում եմ, որ սա Հայաստանի աննախադեպ նվաճումն է, ՀՀ քաղաքացիների կարեւորագույն նվաճումը»:

Ամենայն հայոց կաթողիկոսն ԱԺ ընտրությունները համարում է ներքաղաքական զարգացումների կարեւոր հանգրվան

ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունները դարձան Հայաստանում վերջին ամիսներին ընթացող ներքաղաքական զարգացումների կարեւոր հանգրվան: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն իր ուղերձն է հղել ՀՀ ազգային ժողովի ընտրությունների առիթով:

«Հայրենի մեր երկրում տարվույս դեկտեմբեր 9-ին տեղի ունեցան ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ՝դառնալով կարեւոր հանգրվան Հայաստանում վերջին ամիսներին ընթացող ներքաղաքական զարգացումների: Մեր օրհնությունն ենք բերում սիրեցյալ մեր ժողովրդին, ինչպես եւ կուսակցություններին, որ ապագայի հանդեպ պատասխանատվության գիտակցումով մասնակցություն բերեցին խորհրդարանական ընտրություններին: Մեր շնորհավորանքներն ու բարեմաղթանքներն ենք հղում «Իմ քայլը» դաշինքին, «Բարգավաճ Հայաստան» եւ «Լուսավոր Հայաստան» կուսակցություններին, որոնք արժանացան մեր ժողովրդի վստահությանը՝ պատասխանատվություն ստանձնելով մեր երկրի ապագայի համար: Աղոթում ենք, որ Տերը հաջողություններ պարգեւի նորընտիր խորհրդարանի աշխատանքներին՝ հանուն մեր Հայրենիքի առավել զորացման եւ բարօր ապագայի կերտման»,- ասված է ուղերձում:

Վեհափառը նաեւ նշել է, որ Առաքելական Սուրբ Եկեղեցին, ինչպես միշտ, իր ջանքերն է բերելու մեր պետականության ամրապնդման, ազգային համերաշխության զորացման եւ ներքին ու արտաքին մարտահրավերների հաղթահարման հարցում:

Բակո Սահակյանի շնորհավորանքը



Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը դեկտեմբերի 10-ին շնորհավորական ուղերձ է հղել Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանին:

Ուղերձում ասված է.

«Մեծարգո՛ պարոն Փաշինյան,

Արցախի Հանրապետության ժողովրդի, իշխանությունների եւ անձամբ իմ անունից շնորհավորում եմ Ձեզ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրություններում Ձեր ղեկավարած դաշինքի տարած համոզիչ հաղթանակի կապակցությամբ:

Հուսով եմ, որ նոր Ազգային ժողովն ու կառավարությունն ըստ ամենայնի կնպաստեն Հայաստանի Հանրապետության զարգացմանն ու զորացմանը, Հայաստան-Արցախ-Սփյուռք կուռ եռամիասնության պահպանմանը, համազգային ծրագրերի իրականացմանը:

Մեր պետականության ու ժողովրդի առջեւ ծառացած խնդիրների լուծումը, պաշտպանունակության եւ անվտանգության համակարգի հետագա ամրապնդումը, սոցիալ-տնտեսական առաջընթացի ապահովումը, բնակչության կենսամակարդակի բարձրացումն այն հիմնական ուղենիշներն են, որոնք պետք է լինեն երկու հայկական հանրապետությունների եւ դրանց քաղաքական ղեկավարության գործունեության հիմքում:

Մաղթում եմ Ձեզ, Հայաստանի Հանրապետության մեր բոլոր քույրերին ու եղբայրներին խաղաղություն, քաջառողջություն, հաջողություններ ու հաղթանակներ՝ ի փառս մեր Հայրենիքի ու ժողովրդի»:

Լևոն Տեր-Պետրոսյան

Նոր իշխանությունները կանգնած են լուրջ մարտահրավերների առաջ

Հայ Ազգային Կոնգրեսն իր հայտարարության մեջ շնորհավորում է «Իմ քայլը» դաշինքին եւ նրա ղեկավար Նիկոլ Փաշինյանին՝ նշելով. **«Առավել նշանակալի է, որ քոչարյանա-սերժական բռնապետության վերջնական տապալումը տեղի ունեցավ լիովին ազատ եւ դեմոկրատական ընտրությունների միջոցով»:**

Հայ ազգային կոնգրեսը հայտարարում է, որ ընտրություններում ժողովրդի ազատ կամարտահայտությամբ պսակված թավշյա հեղափոխության գլխավոր նվաճումն անկասկած այն է, որ Հայաստանի ժողովուրդը կրկին դարձել է քաղաքական գործընթացների առանցքային դերակատարը:

«Մեր հասարակության քաղաքացիական հասունության վկայությունն էր նաեւ ապրիլյան հեղափոխությունից մինչեւ ընտրություններ ընկած ժամանակաշրջանը, որն անցավ անցնցում՝ պահպանելով երկրի ներքին կայունությունն ու հասարակական համերաշխությունը», - ասված է հայտարարության մեջ:

- **«Ամեն ինչ դեռ նոր է սկսվում: Ազատ եւ արդար ընտրությունների անցկացումն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է երկրի ժողովրդավարացման եւ զարգացման համար: Նոր իշխանությունները կանգնած են լուրջ մարտահրավերների առաջ. ապահովել Հայաստանի եւ Արցախի անվտանգությունը, արմատախիլ անել կոռուպցիան եւ հաստատել արդարադատություն, տնտեսությունը դնել զարգացման ուղու վրա, հզորացնել քաղաքացիական հասարակության ինստիտուտները, ընդունել նոր հարկային եւ ընտրական օրենսդրություն»:**

«Հայ ազգային կոնգրեսն իրենից կախված ամեն ինչ կանի, որպեսզի ապահովվի ժողովրդավարական հեղափոխության նպատակների իրականացումը եւ նշված մարտահրավերների հաղթահարումը» - ընդգծում է կուսակցությունը:

Թիվ 12 ընտրատարածքում յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի տարածքային ընտրական ցուցակում ընդգրկված յուրաքանչյուր թեկնածուի կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թիվը

1.Հայաստանի հանրապետական կուսակցություն

1. Ալեքսանյան Դավիթ Մավրի – 350
2. Հարությունյան Մենուա Արտակի - 353
3. Հովակիմյան Լիլիթ Խաչատուրի – 84
4. Մեսրոպյան Անի Ալեքի – 168
5. Պարոնյան Արայիկ Սաշիկի – 754
6. Պետրոսյան Գարեգին Խաչիկի - 95
7. Պետրոսյան Շուշան Սամվելի – 117
8. Սարգսյան Հարություն Վաչագանի – 587

2.«Քաղաքացու որոշում» սոցիալ -դեմոկրատական կուսակցություն

1. Տոռոզյան Ռուզաննա Էդիկի - 189
2. Ենոքյան Թեհմինե Մխիթարի – 150
3. Ալեքսանյան Աննա Արտավազդի – 124
4. Սաֆարյան Արամայիս Վիտալիկի - 23
5. Ամիրխանյան Արտավազդ Սերգեյի - 64

3.«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն

1. Ավետյան Սամվել Օվկիանի - 729
2. Հայրապետյան Վահագն Միրաքի - 223
3. Հովհաննիսյան Սուրիկ Հայկի - 107
4. Մաթևոսյան Գեսիկ Մարտիկի - 382
5. Պետրոսյան Նունե Աշոտի - 441
6. Արսենյան Արմեն Տարիելի - 200
7. Հովհաննիսյան Նեկտար Ղեւոնդի - 163
8. Գեւորգյան Գագիկ Լեռնիկի - 1798

4.«Իմ քայլը» կուսակցությունների դաշինք

1. Սարգսյան Տրդատ Նորիկի – 10042
2. Բաբայան Նարեկ Վարուժանի – 9657
3. Խաչատրյան Արմեն Էդմոնդի – 6657
4. Ղահրամանյան Նարեկ Սամվելի – 4211
5. Գրիգորյան Աննա Արամի - 5503
6. Համբարձումյան Կարեն Հովհաննեսի - 7474
7. Կարապետյան Տիգրան Գոռի - 9922
8. Ծատրյան Մարիամ Ալիկի - 4455
9. Կանդազյան Կարեն Ստյոպայի – 2408
10. Ղազարյան Մարինա Կամոյի – 852

5.«Լուսավոր Հայաստան» կուսակցություն

1. Գրիգորյան Սրբուհի Էդիկի – 392
2. Կարապետյան Նորայր Հենրիկի - 438
3. Հայրապետյան Արմեն Վարդանի - 474
4. Խաչատրյան Ռաֆֆի Կամոյի - 928
5. Ղուկասյան Հասմիկ Կամոյի - 98
6. Մարտիրոսյան Վահրամ Սուրենի - 194
7. Գեւորգյան Գարիկ Գագիկի - 785
8. Հակոբյան Արթուր Արզումանի – 380
9. Սարգսյան Արփինե Ռուբիկի – 69
10. Հովհաննիսյան Ռոման Վազգենի - 138

6.«Քրիստոնեա- ժողովրդական վերածնունդ» կուսակցություն

1. Հարությունյան Միսակ Սերվենտի – 47
2. Հովսեփյան Գեւորգ Հրաչիկի – 62
3. Նազարյան Վահագն Հոմերոսի – 33
4. Շախրերյան Իրինա Ստեփանի 70
5. Խաչատրյան Արմեն Հայկի - 112
6. Աղաբաբյան Մերի Լեւոնի - 81

7.«Ազգային առաջընթաց» կուսակցություն

1. Օհանյան Աղավնի Վաչագանի - 108
2. Բաբայան Մանե Մարտինի - 81
3. Գասպարյան Լիլիթ Հարությունի - 23
4. Մինասյան Լիպարիտ Լեւուշի - 46
5. Օհանյան Լուիզա Վաչագանի – 13

8. «Մենք» դաշինք

1. Արսենյան Հովիկ Հայկազի – 239
2. Մինասյան Կառլեն Արամի - 1368
3. Բրեյան Հայրապետ Գուրգենի - 58
4. Պողոսյան Նելլի Ռազմիկի - 34
5. Բալյան Վարդան Վալերիի - 199
6. Ղազարյան Մասիս Փափագի – 155
7. Գեւորգյան Վարդան Շմավոնի – 325
8. Մովսիսյան Անուշավան Թաթուլի – 572
9. Մինասյան Սոնա Սամվելի - 177

9.«Օրինաց երկիր» կուսակցություն

1. Միքայելյան Թերեզա Վազգենի – 91
2. Ներսիսյան Անուշ Ապավենի – 47
3. Սարգսյան Արթուր Մելիքսեթի – 40
4. Լեւոնյան Աննա Ռուբիկի – 80
5. Հարությունյան Արմեն Մելիքսեթի – 152

10.«Սասնա ծռեր» համահայկական կուսակցություն

1. Գասպարյան Գեւորգ Մայիսի – 243
2. Հարությունյան Արտավազդ Լյովայի – 90
3. Գրիգորյան Սարո Գագիկի – 160
4. Գեւորգյան Արմեն Ժուլվերի – 110
5. Գրիգորյան Սուսաննա Օնիկի – 96
6. Հակոբյան Ռաֆիկ Սերյոժայի – 85
7. Դանիելյան Ռիտա Մացակի – 29
8. Տեր-Վարդանյան Ռուզաննա Հովսեփի – 48

11.«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն

1. Աղաբեկյան Սվետիկ Արշավիրի - 245
2. Ավետիսյան Արմեն Լեւոնի - 513
3. Բագրատյան Սերգեյ Պապաշի - 1492
4. Զոհրաբյան Նաիրա Վահանի - 2110
5. Հակոբյան Ռոբերտ Գուրգենի - 577
6. Հարությունյան Էմիլ Մելսիկի - 631
7. Մաթեւոսյան Անդրանիկ Մեւոսի - 229
8. Մնացականյան Գրիշա Ժորիկի - 484
9. Սայադյան Արմենուհի Եգորի - 95

Զինվորները դեկտեմբերի 9-ին քվեարկել են Սյունիքի մարզի 20 ընտրական տեղամասում

Զինվորների քվեարկության առնչությամբ նախընտրական Սյունիքում բազմաթիվ հարցեր բարձրացվեցին, որոնք (առանց բացառության) մնացին անպատասխան:

Մենք դեռ կանդրադառնանք հարցին, թե զինվորականները Սյունիքում վարկանիշային կարգով առաջադրված ո՞ր թեկնածուների օգտին են հիմնականում քվեարկել:

Առայժմ նշենք, որ Սյունիքի մարզն ընդգրկող երկու տարածքում զինվորականները քվեարկել են ընտրական քսան տեղամասում՝ Աղիտու, Սիսիան, Տեղ (երկու տեղամաս), Կորնիձոր, Խանածախ, Քարաշեն, Արավուս, Խնձորեսկ (երկու տեղամաս), Ներքին Խնձորեսկ, Կապանի Ձորք թաղամաս, Ագարակ գյուղ, Սրաշեն, Սյունիք գյուղ, Ներքին Հանդ, Ճակատեն, Մեղրի քաղաք, Ագարակ քաղաք, Նռնաձոր:

«Սյունյաց երկիր»

Ազգային ոգու եւ կերտվածքի ոգեկոչումը Սերո Խանզադյանի վերջին ստեղծագործություններում

Կյանքի վերջին շրջանում, չնայած առաջ եկած բազմաթիվ դժվարություններին, Ս.Խանզադյանը հանդես բերեց զարմանալի բեղուն գործունեություն: Հրապարակ հանեց «Անդրանիկ», «Արաքսը պղտորվում է», «Շուշի, «Նժդեհ» վիպական կտավները:

Գրականագետներից շատերի կարծիքով, ինչն անվիճելի է, այդ ստեղծագործությունները չեն հասնում հեղինակի՝ նախորդ տասնամյակներում գրված պատմավեպերին, թեեւ դրանք նույնպես ունեն պատմական հիմք: Բայց եւ պետք է խոստովանել, որ դրանք դեռեւս լիարժեք ու ամբողջական ուսումնասիրված չեն:

Ահա թե ինչ է ասում ճանաչված գրականագետ Դավիթ Գասպարյանը «Սյունյաց երկիր» թերթին տված հարցազրույցում. **«Խանզադյանի վերջին վեպերը, ճիշտ է, ի վերջո չվրիպեցին գրական ուշադրությունից, ի վերջո հասան նաեւ ընթերցողին, բայց չեմ կարծում, թե մեր գրականագիտությունը յուրացրեց. ոչ թե բարդության պատճառով (այդպիսի խնդիր չկա), այլ պարզապես չընթերցեց, իրենը չդարձրեց: Շատերը չեն էլ կարդացել»:**

Գրականագետն ասում է նաեւ. **«....Մեղքը ոչ թե պատմավեպինն է, այլ ժամանակինը:**

....Այո՛, այդ վեպերը նախկինների նման չգրախոսվեցին, մրցանակների չարժանացան, բայց աննկատ էլ չմնացին: Ընդհանուր ստվերային ժամանակ էր, ստվերը ծածկել էր ամեն ինչ, այդ թվում՝ նաեւ գիր ու գրականությունը»:

«Անդրանիկ» երկը գրել է 1973-83 թվականներին՝ անվանելով այն վեպ եւ ոչ պատմավեպ, որը լույս տեսավ, սակայն, 1989թ.:

Ինչպես Սեւակ Արզումանյանն է գրել. **«««Անդրանիկ» վեպի ստեղծումը Ս.Խանզադյանը սուրբ առաքելություն է համարել գրական իր կենսագրության մեջ՝ փորձելով ոչ միայն անմահացնել մեծ զորավարի անօրինակ սխրագործությունները, այլեւ թուրք ոճրագործների արյունոտ ճակատներին մեկ անգամ եւս շպրտել այն ճշմարտությունը, որ ոչ մի դահճի կամ դահճապետի, ոչ մի յաթաղանավոր ոհմակի չի հաջողվի պատմության երթից հանել հայի հավերժական ընթացքը, կոտրել նրա կամքն ու ոգին»: Ինչ վերաբերում է վեպի թերություններին, ապա, ինչպես Սեւակ Արզումանյանն է նշում. «դրանք, այնուամենայնիվ, հաջողված երկի թերություններ են»:**

«Անդրանիկ» վեպում գրողը հավատարիմ է մնացել եւ՛ պատմականությանը, եւ՛ պատմական փաստերին ու դրանց միջոցով արծարծել արդիական կենսական խնդիրներ:

«Անդրանիկ»-ը, ի վերջո, տեղին եւ ժամանակին ծնված վեպ է:

Ջոն Կիրակոսյանի կարծիքով. **«Ս.Խանզադյանի «Անդրանիկ» վեպը հաջողված գիրք է: Վիպասանն իր առջեւ դրել եւ լուծում է չափազանց բարդ խնդիրներ, փորձում է վերականգնել ժամանակի մթնոլորտը, շունչը, տրամադրությունները: Այդ խնդրի լուծումը նրան հիմնականում հաջողվել է: Առանձին դեպքերում թույլ լուծումները ոչ թե վիպասանի վարպետության պակասի հետեւանք են, այլ դեպքերի, խնդիրների, հակասությունների, ազգային, քաղաքական բարդ հանգույցների ու կսկիծների չափից ավելի խճողվածության արդյունք»:**

Իսկ Աբգար Ափինյանը չի թաքցնում իր հիացմունքը. **«Սա մի էպիկական ասք է՝ հերոսական պատմություն մեծ Զորավարի՝ Անդրանիկի ու նրա հերոս զինվորների մասին»:**

Ա.Ափինյանը գրում է նաեւ. **«Իր վերջին վեպն արժանիորեն չգնահատվեց, չհասկացվեց... մինչդեռ երբեք այսքան տագնապ ու հույս չէր եղել իր սրտի մեջ՝ գիտեր, որ մեծ Զորավարի կյանքում հայտնաբերել է ժողովրդի գոյության առեղծվածը....»:**

«Արաքսը պղտորվում է» վեպը լույս տեսավ 1985-ին:

Նյութը 17-րդ դարասկզբի իրադարձություններն են՝ Շահ Աբասի արշավանքները, մեծ գաղթը... Վեպի հիմքն Առաքել Դավրիժեցու «Պատմություն»-ն է: Ինքը՝ Դավրիժեցին է վեպում «երեւում» կրտսեր Առաքելին եւ պատմում իր օրերի եղելությունները: Վեպի նպատակը, ըստ էության, պատմության դժվարագույն այդ շրջանի վերաբերյալ պատանիներին ու մանուկներին տեղեկություններ տալն է:

«Շուշի» վեպը գրել է 1986-88թթ., լույս է տեսել 1991-ին: Վեպում պատկերված են 18-րդ դարի վերջին քառորդի Արցախ-Ղարաբաղյան իրադարձությունները: Ե՛վ ժամանակագրական, եւ՛ ազգային-ազատագրական պայքարի առումով «Շուշի»-ն «Մխիթար Սպարապետ»-ի շարունակությունն է: Վեպի բնաբան է ընտրվել Մովսես Կաղանկատվացու խոսքը. **«Ճշմարտությունը չի կարող ծածկված մնալ, եւ լույսը՝ փակի տակ լինել»**. հեղինակը նկատի է ունեցել ազերի պատմաբանների կեղծիքներն Արցախ-Ղարաբաղի հարցում:

Այդ վեպը հեղինակի բուռն հայրենասիրության եւս մեկ վառ օրինակ է: Սեւակ Արզումանյանի բնութագրմամբ. **«Ս.Խանզադյանի վերջին շրջանի ստեղծագործություններում որքան էլ թերացումներ կամ վրիպումներ նկատվեն՝ դրանք շատ չնչին են այն կենսականի ու արժեքավորի հանդեպ, որ վաստակաշատ հեղինակը ներդրել է հայոց գրականության, ի մասնավորի, վիպասանության մեջ...»:**

1993թ. լույս տեսավ «Գարեգին Նժդեհ» վեպը: Այն ընդգրկում է 1918-21թթ. Լեռնահայաստանում՝ Սյունյաց աշխարհում, տեղի ունեցած ճակատագրական այն իրադարձությունները, որոնք սպառնում էին Արցախ-Ղարաբաղի ու Նախիջեւանի հայկական երկրամասերի հետ՝ Զանգեզուրի բռնակցմանը նոր գոյացած Ադրբեջանական պետության կողմից:

«««Գարեգին Նժդեհ» վեպին չպետք է մոտենալ գրողի նախորդ պատմական երկերի պես՝ իբրեւ դասական ավանդներով ստեղծված, հոգեբանական ավարտուն բնավորությունների, սյուժետային ամուր կապերի եւ փիլիսոփայական խոհերի հյուսվածք: Վեպում առաջին պլանում է տարեգիր-ժամանակագիրը, շատ դեպքեր ու երեւույթներ հրամցվում են գեղարվեստի ավանդական «կանոններից» անկախ: Նման մոտեցման համար հիմք է եղել ժամանակի հրամայականը. Արցախյան պատերազմում պետք էր ճշմարտությունը հասցնել ժողովրդին», - գրում է գրականագետ Սեւակ Արզումանյանը:

Ամփոփենք ասվածը, ամփոփենք՝ վերստին դիմելով Դավիթ Գասպարյանին. **«....Շեշտը չպիտի դնել Խանզադյանի գրքերում առկա վրիպումների, անճշտությունների վրա, շեշտը պիտի դնել այն ոգեղեն ուժի վրա, այն նվիրումի վրա, որ գրողն ուզում էր անցյալի էջերով, իր բնաշխարհի էջերով արթնացնել ու ընթերցող դաստիարակել...**

Մեր գրականության գործնական նշանակությունը նաեւ ազգապահպանությունն է, հայի մեջ հայը փրկելը, պահելը, վերականգնելը: Սերո Խանզադյանի գրականությունը լիուլի իր այդ կարեւոր առաքելությունը կատարեց»:

Վստահաբար կարող ենք արձանագրել՝ ասվածը լիովին վերաբերում է նաեւ գրողի վերջին շրջանի ստեղծագործություններին:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հանրային քննարկումն ի վերջո կայացավ

Կապանի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Ագապե» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կապան խոշորացված համայնքում նախատեսվող նավթի եւ գազի բնական պաշարների երկրաբանական ուսումնասիրության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկման երկրորդ փուլը, որը երկրաբանահետախուզական աշխատանքներին էր վերաբերում: Ի տարբերություն նոյեմբերի 5-ին անցկացված քննարկման՝ այս անգամ այն չտապալվեց, բայց չի կարելի ասել, որ անցավ խաղաղ պայմաններում: Ընկերության ներկայացուցիչներն իրենց փաստարկներն էին փորձում հիմնավորել, բնապահպանական ակտիվիստներն էլ՝ իրենցը: Առաջինները պնդում էին, որ Հայաստանում նավթ ու գազ հայտնաբերելու դեպքում մեր երկիրը էներգետիկ անկախություն է ձեռք բերելու, երկրորդները ասում էին, որ առանց այն էլ հանքարդյունաբերական ձեռնարկություններով հագեցած Սյունիքը բնապահպանական նոր խնդիրներ է ունենալու: Եղավ նաեւ խնդրո առարկայի առնչությամբ հանրաքվե անցկացնելու առաջարկ, ինչպես նախորդ հանրային քննարկման ժամանակ:

«Ագապե» ընկերության ֆինանսական գծով տնօրեն Քրիստինե Վարդանյանը, եւս մի անգամ ներկայացնելով ընկերության գործունեությունը, ներկաներին տեղեկացրեց, որ այս փուլում լինելու են միայն սեյսմահետախուզական աշխատանքներ: Իսկ հորատում՝ նավթ արդյունահանելու համար հետագայում եւս չորս հանրային քննարկում կպահանջվի:

«Եթե դրական եզրակացություն լինի, որ Կապանի համայնքում կա հեռանկարային տարածք, միայն դրանից հետո ծրագիր է մշակվելու, եւ չորս փուլով հանրային լսումներ են լինելու՝ ստույգ մի համայնքի կամ տարածաշրջանի համար, որտեղ հորատանցքը պլանավորվելու է փորել», ասաց Ք. Վարդանյանը: Նրան հակադարձեց իրավաբան Արշավիր Խալափյանը՝ ասելով, որ ոչ հեռու անցյալում նույն մեղմ հնչերանգով, հանգստացնող տոնով ներկայացվում էր Կապանի տարածաշրջանում ուրանի արդյունահանման նպատակով լեռնահետախուզական աշխատանքների մասին, բայց կապանցին իրեն բնորոշ իմաստությամբ կանխեց այդ ծրագիրը: Նա կոչ արեց նույն կերպ վարվել նաեւ այս ծրագրի դեպքում:

Այնուամենայնիվ, ընկերության փաստարկները չէին բավարարում բնապահպանական ակտիվիստներին, եւ նրանք համերաշխորեն լքեցին դահլիճը: Իսկ ներսում եղողներին մնում էր հանրային լսումը հասցնել տրամաբանական ավարտին: Ընդ որում՝ այս անգամ Կապան խոշորացված համայնքում նավթ ու գազ արդյունահանելու կողմնակիցներն ավելի շատ էին: Ինչեւէ, հանրային լսումը կայացած համարվեց: Կապան խոշորացված համայնքում նավթ ու գազ հետազոտման թույլտվություն կտա՞ն, թե՞ ոչ: Հարցին պատասխան կտա բնապահպանության նախարարությունն իր եզրակացությամբ:

Վահրամ Օրբելյան

Նվիրված էր հաշմանդամների միջազգային օրվան

Կապանի N3 հատուկ կրթահամալիրում տեղի ունեցավ «Մենք շողերն ենք արեւի» խորագրով ցերեկույթ՝ նվիրված ՄԱԿ-ի կողմից 1992թ, դեկտեմբերի 3-ին հռչակված հաշմանդամների միջազգային օրվան: Հանդիսությանը մասնակցում էին Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը, փոխմարզպետներ Գոռ Թադեւոսյանը, Հերմինե Համբարձումյանը, Կապանի համայնքապետ Գեւորգ Փարսյանը, Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեբոյանը: Մինչ միջոցառումը սկսելը Սյունիքի մարզպետը շրջեց կրթօջախում, ծանոթացավ ուսման եւ հանգստի պայմաններին, իսկ դահլիճում՝ սաների ձեռքի աշխատանքներին:

Կրթահամալիրի տնօրեն Մարինե Ղազարյանը հակիրճ ներկայացրեց օրվա խորհուրդը՝ տեղեկացնելով, որ ունեն 76 սան, ովքեր առանձնահատուկ խնամքի կարիք ունեն եւ

էջ 8

Հանքարդյունաբերության ուրվականը. Շահումյան բանավանն ամայացել է, մարդկանց փոխարինում են աղբն ու թափոնները

Շահումյան. փխուր իրականություն Սյունիքի մարզկենտրոն Կապանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի երակներից մեկը Շահումյան բանավանի տարածքում է: Այն բանից հետո, երբ կանադական «Դինո Գոլդ Մայնինգ» հանքարդյունաբերող ընկերությունը 2000-ականներին Շահումյանում որոշեց բաց հանքի շահագործման նպատակով հետախուզական աշխատանքներ կատարել, ընկերությունը գնեց շահումյանցիների հողերը: Հետախուզական աշխատանքներն ընթացան 2008-2013 թթ., մինչեւ որ ընկերությունը (հետագայում՝ «Դանդի Փրիշս Մեթալս Կապան» ՓԲԸ) որոշեց հանքը շահագործել փակ եղանակով:

Այսօր Շահումյան բանավանը, որը, փաստորեն, հանքարդյունաբերողի սեփականությունն է, անմարդաբնակ տարածք է: Ինչպես հայտնի է, 2016-ին կանադացիները «Դանդի Փրիշս Մեթալս Կապան» ՓԲԸ-ն վաճառեցին ռուսական արմատներով «Պոլիմեթալ Ինթերնեյշընլ»-ին: Այժմ Կապանի հանքի շահագործողը «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ն է (նախկին «Դանդի Փրիշս Մեթալս Կապան»):

Շեշտենք, որ բաց հանքի հետախուզական ծրագրի ու շահումյանցիները հողերը գնելու համար ընկերության նախկին տերերը միլիոնավոր դոլարներ են ծախսել, ինչը ժամանակին «Հետքի» հետ զրույցում հաստատել է «Դանդիի» գլխավոր տնօրեն Հրաչ Ջաբրայանը: **«2008-2013 թթ. բավական լուրջ գումարներ են դրվել հետախուզական աշխատանքների վրա, եթե չեմ սխալվում, խոսքը 40-60 մլն դոլարի մասին է: Այդ գումարի մեջ ներառվում է նաեւ Շահումյանի բանավանի հողատարածքները գնելը եւ այլն,- 2014-ին մեզ պատմել էր Ջաբրայանը,- գրեթե 5 տարվա ծրագրից հետո հետախուզական արդյունքների հիման վրա վերջնական որոշում կայացրեցինք, որ բաց եղանակով չպիտի շահագործվի հանքը եւ միայն ստորգետնյա եղանակով պիտի շահագործվի: Վերջնական արդյունքները հստակորեն մեզ նախ ցույց տվեցին, որ չնայած հանքի բաց եղանակով շահագործումը կարող էր որոշ գումարների շահույթ թողնել, բայցեւայնպես արդարացի չպիտի լիներ հսկայական գումար ներդնել այդքան չնչին շահույթի համար»:**

Փաստորեն, Կապանի մի ամբողջ թաղամաս վաճառվեց մասնավոր ընկերության, փոխհատուցում ստացած բնակիչները հեռացան, մյուս կողմից՝ հսկայական գումարներ ծախսվեցին, ու արդյունքում ծրագիրը ձախողվեց. Շահումյանի ընդերքն այժմ շահագործվում է փակ եղանակով:

Այդուհանդերձ, նախկին տնօրեն Հրաչ Ջաբրայանը, անուղղակի ընդունելով բաց հանքի ծրագրի անհաջողությունը, արդարանում էր, թե Շահումյանից մարդկանց հեռանալը լավ էր: Ահա թե ինչպիսին էր հանքարդյունաբերողի մտածելակերպը:

Հատված 2014-ին արված հարցազրույցից

«-Պարոն Ջաբրայան, Ձեր աշխատանքի համար դատարկեցիք Շահումյան բանավանը բնակիչներից, որոնց թվում մարդիկ կային, ովքեր ափսոսում էին լքել իրենց տունը, այգիները: Ինչպե՞ս հասկանալ ընկերության մոտեցումը:

-Անկախ նրանից, թե ինչ կարող է լինել լրատվամիջոցներում գրված՝ ես բազմիցս այցելել եմ Շահումյան բանավան, եւ իրականությունն այն է, որ այդտեղի ժողովուրդը լավ չէր ապրում, այդտեղի տնակների 90 %-ը փոքր տնակներ էին, այսպես կոչված՝ դաչաներ էին, որտեղ մարդիկ չպիտի ապրեին: Ես, անկեղծ ասած, ուրախ եմ, որ այդտեղ այլեւս բնակչություն չկա: Ժողովուրդը մի քիչ պիտի զարգանա: Մենք շատ-շատ հետ ենք մնացել որոշ բաներից: Մենք տակավին ուզում ենք որոշ տեղերում ապրել 1800-ականների ոճով, 1900-ականների սկզբի ոճով: Մենք պիտի անդրադառնանք, որ կյանքը փոխվում է, մարդ արարածը զարգանում է, եւ ես ուրախ եմ, որ ժողովուրդը հիմա ապրում է քաղաքում եւ ոչ թե այդտեղ եւ ունի նորմալ հոսող ջուր, էլեկտրականություն, չունի տրանսպորտի հարց: Այդ ժողովրդի մեծամասնությունը ոտով բարձրանում կամ իջնում էր Շահումյան բանավան»:

Իրականում Ջաբրայանն այլ կերպ չէր էլ կարող արտահայտվել, քանի որ պիտի ամեն կերպ արդարացներ իր ու ղեկավարության գործելաոճը: Այնինչ կապանցիները հիշում են, որ Շահումյանում բազմաթիվ այգիներ կային, մեծ ու փարթամ պտղատու ծառեր: Մեր զրուցակիցներից մեկը պատմում է, որ բնակիչների հեռանալուց հետո այստեղ էին եկել բենզասղոցներով զինված անձինք ու սկսել հաստաբուն պտղատու ծառերի ջարդը: Մեր ֆոտոխցիկը ֆիքսել է դրանցից մի քանիսի հատված բները:

Կոմբինատը բանավանի տարածքում դատարկ ապարների լցակույտերի հարթակներ է ստեղծել:

Լցակույտերի հարթակներից մեկը, հեռվում՝ կոմբինատին պատկանող Գեղանուշի պոչամբարն է:

Բեռնատարներից զատ՝ այստեղ են գալիս նաեւ կովերը: Ընտանի կենդանիների ներկայությունը հանքարդյունաբերական վայրերում դարձել է Հայաստանի տիպիկ պատկերներից մեկը:

Աղբ, աղբ ու էլի աղբ

Տխուր իրականությունը, սակայն, սկսվում է դեռ մինչեւ Շահումյան հասնելը: Առաջին տպավորությունները կազմում ես արդեն Երեւան-Կապան մայրուղուց աջ թեքվելիս, ինչից հետո ոլոր-մոլոր փոշոտ ճանապարհով վեր ես բարձրանում: Ճանապարհի եզրերին, մեծ ու փոքր ձորակներում, հենց բանավանում, գրեթե ամենուր աղբ է, հիմնականում՝ շինարարական թափոններ ու կենցաղային տարբեր տեսակի իրեր:

Կարելի է տեսնել նաեւ ավտոմեքենաների երկաթյա կմախքներ: Տարածքում չկա որեւէ աղբաման կամ աղբ թափելն արգելող ցուցանակ: Կոմբինատին պատկանող հողերն էլ որեւէ կերպ տարանջատված չեն մնացած հողերից:

Կապանի համայնքապետ Աշոտ Հայրապետյանը «Հետքի» հարցմանն ի պատասխան նշել է, որ ,Շահումյան բանավանն այժմ բնակեցված տարածք չէ, բնականաբար, աղբաման եւ աղբի համար առանձնացված տարածք այնտեղ չեն կարող լինել. տարածքը պատկանում է «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ-ին, հետեւաբար տարածքի պատասխանատուն ընկերությունն է: Ինչ վերաբերում է դեպի Շահումյան գնացող ճանապարհի վրա եղած մեծաքանակ աղբակույտերին, Հայրապետյանն ասում է. **«Ճանապարհին (համայնքային տարածք) մշտական աղբահանություն չի իրականացվում, քանի որ, ինչպես նշեցինք, բնակեցված տարածք չէ, եւ ժամանակ առ ժամանակ ինչպես այդ, այնպես էլ համայնքի այլ տարածքներում չնախատեսված վայրերում թափված աղբակույտերը տեղափոխվում-մաքրվում են»:**

Դատելով հենց ճանապարհին գտնվող աղբակույտերի քանակից ու դրանցում եղած աղբի ծավալներից՝ բոլոր հիմքերն ունենք ասելու, որ Կապանի համայնքապետարանն իրավիճակին չի տիրապետում: Չնայած եթե ընդունենք, որ «ժամանակ առ ժամանակ» հասկացությունը բավականին լայն է, ու այդպես կարող ենք հասկանալ նաեւ, ասենք, մի քանի տարին մեկ աղբ հավաքելը, ամեն ինչ իր տեղը կընկնի:

Հավելենք, որ դեպի Շահումյան գնացող ճանապարհի սկզբնամասում՝ Երեւան-Կապան մայրուղու հարեւանությամբ, կան արտադրական ձեռնարկություններ, որոնք եւս կարող են լինել պոտենցիալ աղտոտող: Փաստն այն է, որ համայնքապետարանը չի կարողանում վերահսկել Կապանի վարչական տարածքում մասնավորի կամ հենց իր ենթակայության տակ գտնվող տարածքների մաքրությունը:

Շահումյանից հարավ Գեղանուշի պոչամբարն է, իսկ հյուսիսում՝ Արծվանիկի պոչամբարը:

Հայրապետյանի տեղակացմամբ՝ ո՛չ բանավանը, ո՛չ դրա ճանապարհը նախատեսված չեն աղբ թափելու համար, այսինքն՝ տարածքում աղբ թափելն արգելվում է: Մեր հարցին, թե ինչո՞ւ քաղաքային իշխանությունները չեն վերահսկում նման գործողությունների կասեցումը, համայնքի ղեկավարն ասում է. **«Բանավանի (մասնավոր տարածք) մաքրության պատասխանատուն «Կապանի ԼՀԿ»-ն է, որն էլ ունի շինաղբի տեղափոխման թույլտվություն եւ կազմակերպում է դա, իսկ համայնքապետարանը հնարավորինս վերահսկում է արգելված վայրերում աղբի նետումը, սակայն, բնականաբար, ամբողջ վարչական տարածքում անհնար է դա վերահսկելը, առավել եւս՝ կասեցնելը: Հնարավոր չէ ունենալ այնքան մարդկային ռեսուրս, որ նման բոլոր վայրերում մշտապես հսկողություն լինի: Իսկ կարգազանցների բացահայտման, պատժման դեպքեր եւ օրինակներ ունենք, նաեւ՝ հենց իրենց ուժերով հետեւանքների վերացման: Ինչպես նաեւ, նման վայրերի մեծ մասում, որտեղ մարդիկ սովորաբար շինաղբ են թափում, տեղադրված են ցուցանակներ ու զգուշացումներ»:**

Այն, որ բնակիչներն ու ձեռնարկությունները մեծ պատասխանատվություն են կրում մաքրության (աղտոտման) համար, չի քննարկվում, հարցն այն է, որ համայնքապետարանի աշխատանքը կոնկրետ Շահումյան բանավանի ճանապարհին չի երեւում:

Մեր դիտարկմանը, թե քանի որ Շահումյանում ու դրա ճանապարհին շինաղբը մեծաքանակ է ու տարբեր վայրերում, ինչից կարելի է ենթադրել, որ այն կուտակվել է ժամանակի ընթացքում, եւ ուրեմն քաղաքային իշխանությունն արդյոք ունի մշակած ծրագիր, թե ինչպես պիտի կազմակերպվի աղբահանությունը վերոնշյալ տարածքից, ու արգելվի-վերահսկվի անօրինական աղտոտումը, Ա. Հայրապետյանը պատասխանել է. **«Համայնքն առանձին տարածքի համար չի կարող նման ծրագիր ունենալ: Նշենք, որ վերջերս համայնքում գույքագրվել-հաշվառվել են անօրինական աղբի կուտակման նման վայրերը, որոնց շարքում նաեւ տվյալ տարածքն է, եւ որոնց վերացման, մաքրման ուղղությամբ աշխատանքներ են տարվում. մի քանի նման վայրեր արդեն մաքրվել են»:**

Կավարտ տանող ճանապարհին

Կրկնենք՝ Շահումյանում ու դրա հարեւանությամբ կատարված որեւէ աշխատանք, դատելով աղբի ծավալներից, նկատելի չէ: Մենք եղել ենք նաեւ Կավարտ թաղամաս տանող ճանապարհին. նույն վիճակն է նաեւ այստեղ: Ողջիի Կավարտ վտակն աղբատար է դարձել:

Կավարտ գետի հունը

Քաղաքի կենտրոնից դեպի Կավարտ տանող ճանապարհի մի հատվածում նկատելի է, որ տեխնիկայով աղբը ճանապարհի եզրից թափել են ձորակի մեջ՝ «լուծելով» խնդիրը: Կավարտ բանավանի հարեւանությամբ մեքենաների «գերեզմանոց» կա: Կապանցիներն ասում են, թե ով ջարդում է իր ավտոն, բերում թողնում է այստեղ:

Հարցրել էինք համայնքապետին, թե արտոնագրված քանի՞ աղբավայր ունի Կապան քաղաքը (խոսքը բուն քաղաքի եւ ոչ թե խոշորացված համայնքի մասին է), եւ «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում քանի աղբավայր է գույքագրվել քաղաքում: Հետաքրքրվել էինք, թե դրանցից քանիսն են մաքրվել-փակվել ծրագրի շրջանակներում ու դեռ քանիսը պիտի մաքրվեն:

«Կապան քաղաքում մինչ «Մաքուր Հայաստան» ծրագիրը եղել է եւ հիմա էլ կա ընդամենը մեկ՝ ՀՀ կառավարության կողմից արտոնագրված աղբավայր: Եղել են նաեւ չարտոնված աղբատեղիներ, որտեղ բնակիչները տարիներ շարունակ շինարարական եւ կենցաղային աղբ են լցրել,- հայտնել է Աշոտ Հայրապետյանը,- նշված ծրագրի շրջանակներում Կապանում մաքրվել է 9 չարտոնված աղբավայր, ծածկվել հողի շերտով, բերվել բնական տեսքի, այդ վայրերում տեղադրվել են զգուշացնող ցուցանակներ տուգանքի չափերի մասին: Աշխատանքները ժամանակ առ ժամանակ կրկնվում են նշված՝ փակված չարտոնված վայրերում, քանի որ դեռեւս արձանագրվում են քաղաքացիների կողմից այդ վայրերում աղբ թափելու դեպքեր»:

Չնայած մեկ-երկու նման ցուցանակ ինքներս տեսել ենք, այդուհանդերձ, փաստ է, որ ոչ միայն աղբը շարունակում են թափել՝ գրեթե վստահ լինելով, որ չեն բռնվելու ու պատժվելու, այլեւ Կապանի տարբեր հատվածներում եղել, մնում ու դեռ մեծանում են զանազան չարտոնված հին աղբատեղիները:

hetq.am
29 ապրիլի 2018
Վահե Սարուխանյան

Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի ցավակցական գիրը Հակոբյան ընտանիքին



Ցավ էր Մեզ համար տեղեկանալ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու զավակ, Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի նախկին տնօրեն Մաքսիմ Հակոբյանի անժամանակ մահվան մասին:

Հանուն Գերագույն հոգեւոր խորհրդի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության՝ բերում ենք մեր սրտակցությունն ու ցավակցությունը ննջեցյալի զավակներին, ընտանիքի հարազատներին ու մերձավորներին:

Լուսահոգի Մաքսիմ Հակոբյանն իր գործունեությունն սկսել է գործարանի հասարակ աշխատավորի պարտականություններից՝ իր ջանադրության ու վարպետության, հմուտ կարողությունների ու գիտելիքների շնորհիվ հասնելով մինչեւ գլխավոր տնօրենի պատասխանատու պաշտոնը:

Նրա ղեկավարությամբ Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն արձանագրել է նոր ձեռքբերումներ ու հաջողություններ:

Բարեհիշատակ Մաքսիմ Հակոբյանն ապրել եւ գործել է բարեպաշտ ոգով՝ իր կյանքում կարեւոր ու առաջնային համարելով աստվածասիրությունն ու եկեղեցասիրությունը, հայրենիքի հանդեպ նվիրումն ու ազգօգուտ գործերի իրականացումը:

Այդ ոգով նա մեծ ներդրում բերեց Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու կառուցմանը, Սյունյաց աշխարհում հավատավոր հայորդիների հոգեւոր- եկեղեցական կյանքի առաջընթացին:

Լուսահոգի Մաքսիմ Հակոբյանը, լինելով «Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի պատվավոր անդամ, մեծ ավանդ ունի ձեռագրերի ձեռքբերման եւ Մատենադարանի ֆոնդի համալրման կարեւոր առաքելության մեջ:

Մենք միշտ բարձր ենք գնահատել հոգելույս Մաքսիմ Հակոբյանի երկար տարիների նվիրյալ ծառայությունները, ազգօգուտ գովարժան բարեգործությունները՝ նրան շնորհելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձրագույն շքանշանը:

Ի խորոց սրտի աղոթք ենք բարձրացնում առ Ամենաողորմ Տերը, որ արարչական Իր սիրով երկնային երանական բարձունքներում խաղաղություն եւ հանգստություն պարգեւի նորոգ հանգուցյալ Մաքսիմ Հակոբյանի լույս հոգուն:

Այլեւ հայցում ենք Սուրբ Հոգու մխիթարությունն ու սփոփանքն ընտանյաց անդամներին ու բոլոր հարազատներին, գործընկերներին եւ սգակիր բոլոր անձանց:

«Յիշեսցէ Տէր զհոգի նորոգ ննջեցելոյն և հանգուսցէ զնա ի լոյս երեսաց Աստուածութեան իւոյ ամէն»:

Վշտակից սիրով եւ օրհնությամբ՝
Գարեգին Բ
Կաթողիկոս Ամենայն Հայոց
10 դեկտեմբերի 2018թ.

Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանը ցավակցում է Մաքսիմ Հակոբյանի մահվան կապակցությամբ

Խոր ցավով տեղեկացանք Մատենադարանի լավ բարեկամ եւ բարերար Մաքսիմ Հակոբյանի վաղաժամ մահվան մասին: Մատենադարանի տնօրինությունն ու ողջ աշխատակազմն իր ցավակցությունն է հայտնում Մաքսիմ Հակոբյանի ընտանիքին, բոլոր հարազատներին ու գործընկերներին: Մաքսիմ Հակոբյանի նման հայրենիք շենացնող, ազգային արժեքներ վեհացնող հայի տեսակն անկասկած մեզ շատ է պակասելու:

Երկար տարիներ վարելով Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրենի, ապա տնօրենների խորհրդի նախագահի պատվավոր պաշտոնները՝ Մաքսիմ Հակոբյանը մշտապես կանգնած է եղել Մատենադարանի կողքին՝ սատարելով, օժանդակելով Մատենադարանի առաջնահերթ ծրագրերին՝ ինչպես նոր մասնաշենքի բարեկարգման, այնպես էլ հրատարակչական եւ ձեռագրական ֆոնդերի համալրման բազմաթիվ աշխատանքներին:

Մաքսիմ Հակոբյանն իր վարքով ու նկարագրով էր մերժում մետաղի կարծրությունը, նա համակ բարություն ու ջերմություն էր: Հատուկ թուլություն ուներ հայերեն գրքի, ձեռագրի, առհասարակ ազգային արժեքների նկատմամբ: Հետամուտ էր հայ ժողովրդի բազմադարյան պատմությունն ու մշակույթը նշանավորող աշխատանքներին, ինչն էլ ապացուցվում է Մատենադարանի հետ համագործակցության ամենատարբեր ոլորտներում: Չի եղել մի դեպք, մի դիմում, որ անպատասխան մնար կամ դրական արձագանք չստանար Մաքսիմ Հակոբյանի կողմից: Նրա անունն ու գործը հավերժ կմնան Մատենադարանի պատմության էջերում:

Վախճանվել է մեր ժամանակների մեծագույն սյունեցիներից մեկը՝ Մաքսիմ Հակոբյանը

էջ 1

2004 թվականից «Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի պատվավոր անդամ էր:

2005 թվականին նրան շնորհվել է Ռուսաստանի Դաշնության աշխարհաքաղաքական ակադեմիայի պատվավոր դոկտորի աստիճան:

2007 թվականին հանրապետության մի քանի առաջատար լրատվամիջոցների կողմից ճանաչվել է տարվա մարդ Հայաստանի Հանրապետությունում:

Երկու զավակի հայր էր:

***

Այն, ինչ Մաքսիմ Հակոբյանն արեց 1998-2014 թվականներին Սյունիքի համար, ուրիշներն այլեւս չարեցին ու չեն անի մոտ ապագայում:

Նա մեր ընդերքի ամենամեծ հարստությունը՝ Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրը, ծառայեցրեց հայոց անկախացած պետության հզորացմանը, ծառայեցրեց Սյունյաց աշխարհին:

Նա այնքան գրավիչ դարձրեց հանրապետության լեռնահանքային արդյունաբերության հսկա ձեռնարկությունը, Քաջարան քաղաքը, մարզի ենթակառուցվածքները, որ ամեն տարի մի քանի տասնյակ միլիոն դոլարի ներդրում էր կատարվում երկրամասում:

Եվ ազգանվեր այդ պահվածքը, ինչպես երեւաց տարիների հեռվից, կասեցվեց:

…Չորս տարի է անցել, որ Մաքսիմ Հակոբյանը հետ է քաշվել, որ նրան հետ են պահել:

Բայց ժամանակի ընթացքում, նաեւ հետագայում տեղի ունեցած զարգացումների համապատկերի վրա, նրա կերպարն անընդհատ նորացավ, մարդու եւ երկրի քաղաքացու, Սյունյաց աշխարհի նվիրյալի, կազմակերպչի նրա տեսակը դարձավ ավելի սպասված ու փնտրված:

Ինքն էր, որ բոլորիս համերաշխության, սիրո, փոխադարձ հանդուրժողականության հորդոր էր հղում անընդհատ:

Ինքն էր, որ հիշեցնում էր՝ հայոց անկախ պետությունը անսակարկելի արժեք է, որ դրանից վեհ արժեք չկա բնության մեջ:

Ինքն էր ասում՝ Սյունիքը մեր սրբավայրն է, մեր սկիզբն ու ավարտը, մեր վաղվա օրը, հայոց պետականության ու հայոց արժանապատվության ողնաշարը:

Ինքն էր բոլորիս դաս տալիս՝ ավելի լավ է հայրենի երկրամասում մի ծառ տնկել, քան ուրիշ տեղ անտառներ հիմնել:

Ինքն էր, որ դողում էր ամեն մի սյունեցու կյանքի ու առողջության համար եւ մեծագույն պատրաստակամությամբ կանգնում ամեն մի հիվանդի սնարի կողքին:

Ինքն էր, որ մեր լեռնաշխարհի ամեն մի գյուղի, ամեն մի կոլեկտիվի խնդիրն իր անձնական հոգսն էր համարում:

Ինքն էր, որ սեփական առողջության զոհաբերումով պայքարում էր Քաջարանի կոմբինատի եւ ընդհանրապես Սյունիքի մարզի ներդաշնակ զարգացման համար:

Ինքն էր, որ Սյունյաց աշխարհի՝ հազարամյակներով ձեւավորված արժեքները, մեր մշակույթը, մեր դպրոցը, հայոց Մատենադարանը, Աստծո երկրային տաճարները մեր լինելիության վեմ քարն էր համարում:

Ու այդպես շարունակ…

Եվ այդ ամենի համար Սյունյաց լեռնաշխարհը երախտագիտությամբ էր վերաբերվում նրա կերպարին ու անցած ճանապարհին, ով դեռեւս տարիներ առաջ դասվեց մեր երկրամասի նորագույն պատմության ամենաարժանավորների շարքը: Ու այդպես էլ հիշվելու է գալիք սերունդների կողմից:

Շատ ափսոս, որ այլեւս մեզ հետ չէ Մաքսիմ Անուշավանի Հակոբյանը:

Եվ ուրեմն՝ հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի…

Սամվել Ալեքսանյան

Մաքսիմ Հակոբյանն իր մշտնջենական հանգրվանը գտավ Քաջարանի քաղաքային գերեզմանոցում

2018թ. դեկտեմբերի 12-ին Սյունյաց աշխարհը հրաժեշտ տվեց անկախության շրջանի իր մեծագույն զավակներից մեկին՝ Մաքսիմ Անուշավանի Հակոբյանին:

Նախօրեին՝ դեկտեմբերի 11-ին, հարյուրավոր կապանցիներ Կարմրաքարում դիմավորեցին Մաքսիմ Հակոբյանի աճյունը Երեւանից տեղափոխող թափորին:

Մինչ այդ սգո թափորին դիմավորել էին Գորիսի մուտքի մոտ:

Մաքսիմ Հակոբյանի աճյունը տեղադրվեց Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, որի կառուցմանը բացառիկ ակտիվ մասնակցություն էր ունեցել նորոգ հանգուցյալը:

Ժամը 17:00-ին սկիզբ էր առել հոգեհանգստյան արարողությունը:

Աստծո այդ տաճարն իր շուրջն էր խմբել հազարավոր սգախռով մարդկանց ոչ միայն Կապանից, այլեւ Մեղրուց, Սիսիանից, Գորիսից, մայրաքաղաքից, ինչպես եւ հանրապետության այլ վայրերից:

Այնուհետեւ կատարվել է հոգեհանգստյան կարգ՝ գլխավորությամբ Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վարդապետ Հակոբյանի:

Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահն ընթերցել է Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի ցավակցական գիրն՝ ուղղված սգակիր Հակոբյան ընտանիքին:

Դեկտեմբերի 12-ին՝ ժամը 12:00-ին, Մաքսիմ Հակոբյանի սգո թափորը Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցուց շարժվել է Քաջարան քաղաք:

Քաղաքային գերեզմանատանը տեղի է ունեցել հրաժեշտի արարողություն:

Դամբանական խոսքով հանդես է եկել Քաջարանի քաղաքապետ (2002-2016թթ.) Վարդան Գեւորգյանը՝ ներկայացնելով Մաքսիմ Հակոբյանի կյանքն ու գործունեությունը, նաեւ նրա անուրանալի վաստակը՝ մատուցած Հայաստանի Հանրապետությանը, ինչպես եւ Սյունյաց աշխարհին:

Դամբանախոսը երկրամասի բնակիչների անունից ցավակցություն հայտնեց սգակիր Հակոբյան ընտանիքին՝ անդառնալի այս վճռի ու կորստյան առիթով:

Մաքսիմ Հակոբյանը հողին հանձնվեց ընտանեկան գերեզմանատանը, որտեղ ննջում է հանգուցյալի կինը՝ երջանկահիշատակ Լաուրա Հարությունյանը, ով երկրային կյանքին հրաժեշտ էր տվել 2002 թվականին՝ 45 տարեկանում:

Թող Մաքսիմ Հակոբյանի խոնջավաստակ մարմինը հանգչի խաղաղությամբ, եւ թող Տերը նրա հոգին ընդունի երկնային օթեւանում:

«Սյունյաց երկիր»

Նարեկ Մինասյանի անհատական երկրորդ ցուցահանդեսը

Հայաստանի ժամանակակից արվեստի թանգարանի Կապանի մասնաճյուղում վերջին ժամանակներս ցուցահանդեսի պակաս չկա: Նոյեմբերի 23-ին այստեղ եւս մարդաշատ էր, հավաքվել էին արվեստասերներ, տարբեր զբաղմունքի եւ տարիքի մարդիկ. բացվեց ՀՀ նկարիչների միության անդամ Նարեկ Մինասյանի ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսը՝ նվիրված նրա ծննդյան 28-ամյակին: Ըստ ամենայնի մի պատեհ առիթ՝ ծանոթանալու երիտասարդ գեղանկարչի ստեղծագործական աշխարհին:

Նարեկը նկարել է վաղ տարիքից: Գույնի եւ գծի լեզուն տիրապետելու առաջին դասերն առել է գեղանկարիչ Բորիկ Մինասյան հորից՝ Կապանի արվեստի դպրոցում: Մարզկենտրոնի համար 9 միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանից տեղափոխվել է Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարան, այնուհետեւ ուսումը շարունակել Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիայի բակալավրիատում, որից հետո ավարտել նույն բուհի մագիստրատուրան գերազանցությամբ: Դիպլոմային աշխատանքն արժանացել է գերազանց գնահատականի: Ընդսմին պարգեւատրվել է բուհի ռեկտոր, ՀՀ ժողովրդական նկարիչ Էդուարդ Իսաբեկյանի անվան մրցանակով եւ դրամական պարգեւով:

Թեեւ երիտասարդ տարիքին, նրա գեղանկարները գտնվում են Անգլիայի, Մոսկվայի, Սանկտ- Պետերբուրգի, Մագդեբուրգի, Երեւանի մասնավոր հավաքածուներում: Սա Նարեկ Մինասյանի երկրորդ անհատական ցուցահանդեսն է: Իսկ ընդհանրապես նրա նկարները ցուցադրվել են տարբեր քաղաքներում կազմակերպված ցուցահանդեսներում: Այս անգամվա ցուցահանդեսում ներկայացված են նրա երեք տասնամյակից ավելի գեղանկարներ՝ հիմնականում քաղաքային թեմաներով՝ «Քաղաք», «Թղթախաղ N 8 կանգառում», «Սրճարան», «Բիլիարդ», «Մանեկենները Կապանում», «Ճախրանք քաղաքի հորիզոնում», «Փողոց»: Բայց այնպես չէ, որ գեղանկարիչը լիովին տրվել է ուրբանիստական թեմային. ցուցադրանքում տեղ են գտել հոգեվիճակներ արտացոլող գեղանկարներ՝ «Տագնապ», «Մայրություն», «Անդորր», «Գայթակղություն», «Կանացի ֆանտազիա», «Հանգիստ» եւ այլն: Եվ այս ամենը պատկերել է գունային հետաքրքրական լուծումներով: Ցուցահանդեսի այցելուների կարծիքը համընկնում էր. Նարեկը գեղանկարչության մեջ ուրույն ձեռագիր ունի՝ ոչ մեկին չնմանվող: Նրա նկարները չի կարելի շփոթվել մի այլ գեղանկարչի ստեղծագործության հետ, ինչը յուրաքանչյուր արվեստագետի ամենամեծ ձեռբերումն է:

Այս միտքը մասնավորապես ընդգծեց գնահատանքի խոսքում արվեստաբան Սուսաննա Մարտիրոսյանը. **«Նարեկն ինքնատիպ, ինքնուրույն մտածողությամբ, սեփական փիլիսոփայությունը գեղանկարչություն բերող նկարիչ է: Գեղարվեստի այս հզոր խառնարանի մեջ սեփական խոսքն ասել, համաձայնեք, շատ դժվար է, բայց Նարեկը փորձեց ու գտավ իր դիմագիծը: Ասում են՝ ամենակարեւորը սեփական դիմագիծը պահպանելն է: Ոչ միայն գտնելը, այլեւ պահպանելը: Եվ Նարեկը քայլ առ քայլ գնում է այդ ճանապարհով: Անպայման պիտի ողջունել նրա ընթացքը եւ խրախուսել»:**

Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան պետթատրոնի գեղարվեստական ղեկավար Արթուր Գաբրիելյանը, ներկայացնելով օրվա խորհուրդը, հրապարակեց Հայաստանի նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանի շնորհակալագիրը՝ ուղղված Նարեկ Մինասյանին՝ Սյունիքի մարզի մշակութային կյանքի ակտիվ մասնակցության, ծննդյան 28- ամյակի եւ անհատական ցուցահանդեսի բացման կապակցությամբ:

Իսկ Նարեկի գեղանկարիչ հայրն ու առաջին ուսուցիչը որդու արվեստի մասին խոսելիս սահմանափակվեց մի նախադասությամբ՝ **«Նարեկի նկարներն արդեն խոսում են նրա մասին»:**

Վահրամ Օրբելյան

Բարեկամությունը՝ կենարար ծառ ու խաղաղության խորհրդանիշ

«Գորիսը՝ 2018թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» միջպետական ծրագրի վերջին ակորդը խփեց նոյեմբերի 23-ին: Եվ ակորդն այդ առաջինը խփեցին դհոլահարները՝ հուժկու, խրոխտ եւ տոնական հնչյուններն ավետեցին միջպետական ծրագրի եզրափակիչ միջոցառումների սկիզբը:

Գորիսի Վ. Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի ճեմասրահում են ԱՊՀ ութ երկրներից ժամանած հյուրեր, ՀՀ մշակույթի նախարարի պաշտոնակատար Լիլիթ Մակունցը, Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը, Գորիս խոշորացված համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը, գորիսեցիներ:

«Գորիս՝ ավանդական ու ստեղծարար իմ քաղաք» խորագրով միջոցառմանն իրենց աշխատանքներն են ներկայացրել դպրոցահասակ նկարիչները, քաղաքի երաժշտական դպրոցների սաների կատարումները, նախադպրոցական ուսումնական հաստատությունների ելույթներն օրը դարձնում են առլեցուն:

Իրենց ձեռքի աշխատանքն են ցուցադրում Գորիսի արվեստի դպրոցի սաները:

Իսկ Գորիսի կանանց զարգացման «Ռեսուրս» կենտրոնը ճախարակ է հանել ու թել է մանում, բուրդ գզում՝ այդպես մշտավառ պահելով հայոց հինավուրց օջախների կենցաղի տարրերից մեկը:

Դե, գորիսեցիներին էլ գիտեք: Նրանք հյուրերին հարգելու-պատվելու հիանալի մշակույթ ունեն, հյուրասիրության մեծ ռեսուրս. Գորիս համայնքի բնակավայրերն իրենց ավանդական խոհանոցն են ներկայացնում, եւ հյուրերն անտարբեր չեն կարող անցնել համեղ ուտեստների, արեւ ըմպած մրգերի կողքով: Հետո էլ ո՞նց մերժես հյուրասիրությունը:

Նոյեմբերի 23-ի երեկոն Վ. Վաղարշյանի անվան պետդրամատիկական թատրոնի դահլիճում էր արդեն:

Խոսափողին մոտենում է ՀՀ մշակույթի նախարարի պաշտոնակատար Լիլիթ Մակունցը եւ մասնավորապես ասում.

- **«Գորիսը՝ 2018թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» ծրագրի շրջանակում մենք ականատես եղանք ջազային հրավառության, վայելեցինք գուսանական արվեստի, դասական, էստրադային երաժշտության պարգեւած հիասքանչ պահերը, լիահույս եմ, որ մշակութային շունչը կշարունակվի: Այս ծրագիրն իրականություն դարձավ բազում մարդկանց ու կազմակերպությունների ջանքերի շնորհիվ: Ուստի ես նրանց շնորհակալություն եմ հայտնում»:**

Նա շնորհակալագրեր հանձնեց Գորիսի համայնքապետարանին, «Արդշինինվեստ» բանկին, Գորիսի պետթատրոնին եւ այլոց:

Ելույթ ունեցավ նաեւ Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը:

- Այսօր ես պատիվ ունեցա մասնակցելու «Գորիսը՝ 2018թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» միջպետական ծրագրի հանդիսավոր փակման արարողության առթիվ կազմակերպված միջոցառումներին: Այս ծրագիրը մշակութային աշխուժություն մտցրեց ողջ Սյունիքում: Ու նաեւ համադրվեցին դասական երաժշտությունն ու ժողովրդական երաժշտությունը, համադրվեցին ԱՊՀ երկրների արվեստը, սովորույթները, ժողովուրդներն իրար մոտիկից շփվեցին: Ահա ինչու շնորհակալություն եմ հայտնում բոլորին:

Այնուհետեւ ներկաները դիտեցին «Գորիսը՝ 2018 թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» ամփոփիչ ֆիլմը: Ամփոփվեցին «Համագործակցության դեբյուտներ» 2018թ. մրցանակաբաշխության արդյունքները:

Երեկոն, եւ առհասարակ ամբողջ ծրագիրը, եզրափակվեց ԱՊՀ էստրադային երգիչների կատարումներով:

«Գորիսը՝ 2018թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» միջպետական ծրագիրը Գորիսի պատմության մեջ մի նոր էջ է: Եվ էջում այդ կգրվի՝ նորոգ մի կամեցողությամբ ԱՊՀ ութ երկրների ազգերը մեկմեկու հետ կամրջվեցին մի նոր բարեկամությամբ, եւ բարեկամությունն այդ կենարար ծառ է, խաղաղության խորհրդանիշ եւ ուղերձ բոլորին՝ եկեք ապրենք համերաշխ ու մեկս մյուսի լավով ուրախանանք, եւ համերաշխությունն ու բարեկամությունը թող փակեն սպառազինության վազքուղիները, ոչ ասենք պատերազմին ու ատելությանը եւ մշակույթը դաձնենք մեկմեկու սիրելու կերպ:

Ալվարդ Մեսրոպյան

Նվիրված էր հաշմանդամների միջազգային օրվան

էջ 7

սովորում են անհատական ուսուցման պլանով: Սովորողների մի մասն ընդգրկված է հատուկ արհեստագործական հոսքում, որտեղ սովորում են կարպետագործի եւ խոհարարի մասնագիտություն: Բացի այդ՝ շնորհալի սաների ձեռքի աշխատանքները ներկայացվում են ցուցահանդես-վաճառքների, որից գոյացած շահույթը նպատակամղվում է կրթահամալիրի բարեկարգմանը: Սաների առօրյան հետաքրքիր դարձնելու նպատակով անցկացվում են բազմազան միջոցառումներ: Իր խոսքում տնօրենն անդրադարձավ ցավոտ խնդրի. դա կրթահամալիրի առջեւում վերգետնյա հետիոտնային անցումի կառուցումն է, քանի որ այն գտնվում է միջպետական ճանապարհի հարեւանությամբ: Ներկաների՝ կրթահամալիրի մասին պատկերացումն ամբողջացավ նրա պատմությանն ու անցած ուղու մասին տեսաֆիլմով:

Այնուհետեւ սաները հանդես եկան ասմունքով ու երգով, ներկայացրին փոքրիկ բեմադրություններ, ցուցադրեցին իրենց հմտություններն ու կարողությունները: Նրանց համար նվերներ էր պատրաստել «World vision» կազմակերպությունը: Կրթահամալիրում վերջերս փոփոխություններ են կատարվել, մասնավորապես, ավելացել են թեքահարթակները, որոնք կառուցվել են «ԷՍԷՖԷԼ» ՍՊԸ-ի եւ «Հուսո երիցուկ» հասարակական կազմակերպության ջանքերով: Իսկ Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը կրթահամալիրին նվիրել է ժամանակակից վարժասարքեր:

Վահրամ Օրբելյան

Կորել է

Դավիթ Հակոբյանի K N 048061 դիպլոմը՝ տրված Կապանի բժշկական ուսումնարանի կողմից 2002 թվականին:

Համարել անվավեր:

Կորել է

Վարդան Կամոյի Մարտիրոսյանի ՊՏ N424199 գր. N 4055 դիպլոմը՝ տրված 1994 թվականին Կապանի շինարարական տեխնիկումի կողմից:

Համարել անվավեր:

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR կոդ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 12.12.2018թ.: